Անի Ավետիսի Մելքոնյան

Ծնվել է 1987 թվականի մայիսի 29-ին, քաղաք Երևանում:

2003 թվականին ավարտել է Երևան քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան թիվ 84 միջնակարգ դպրոցը:

2009թ. ավարտել է Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի պետական համալսարանի (ՄՏՎԻ) իրավագիտության համալսարանը:

18.07.2009-11.02.2010թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայքների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմում՝ որպես գրասենյակի գործավար:

11.02.2010-14.05.2010թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի գործավար:

08.09.2011-10.08.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի գործավարի ժամանակավոր պաշտոնակատար:

01.02.2013-05.05.2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավարի ժամանակավոր պաշտոնակատար:

29.05.2014-20.01.2015թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քաղաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

05.10.2018-07.09.2022թթ. աշխատել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

07.09.2022-01.02.2023թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.06.2023-08.12.2023թթ. աշխատել է ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնում որպես իրավաբանական բաժնի փորձագետ:

2020-2021թթ. սովորել է Արբիտրների բարձրագույն դպրոցում՝ ստանալով համապատասխան հավաստագիր:

Ունի մեկ որդի:

Վահե Մայիսի Հախվերդյան

Ծնվել է 1985 թվականի փետրվարի 17-ին, Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղում:

2001թ.-ին ավարտել է Իջևանի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2008թ.-ին ավարտել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետը՝ ստացել պատմություն (իրավունքի հիմունքներ) մանկավարժության բակալավրի աստիճան:

2003-2005թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ Մատաղիսի զորամասում, մասնակցել մարտական հերթապահությանը:

2008-2010թթ. սովորել է Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում և ստացել մագիստրոսի աստիճան:

2018-2020թթ.սովորել և ավարտել է Հյուսիսային համալսարանի բակալավրիատը՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:

01.01.2012-26.11.2012թթ. աշխատել է Վերաքննիչ վարչական դատարանի աշխատակազմում՝ որպես իրավական փորձաքննությունների ծառայության կրտսեր մասնագետ:

30.11.2012թ.-ից առ այսօր աշխատում է Վերաքննիչ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Շնորհվել է Դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

30.05.2019-08.06.2019թթ. Վերաքննիչ վարչական դատարանի կողմից գործուղվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, անցել սեմինար-դասընթացներ Շփայերի Կառավարման գիտությունների գերմանական համալսարանում, մասնակցել «Վարչական գործընթացը Հայաստանում և Գերմանիայում համեմատության մեջ» գերմանահայկական կոլոկվիումին:

Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

Ունի մեկ դուստր:

Սուսաննա Դավթի Նալբանդյան

Ծնվել է 1969 թվականի ապրիլի 9-ին, քաղաք Երևանում:

1986 թվականին ավարտել է Ձեռժինսկու անվան միջնակարգ դպրոցը:

2006 թվականին ավարտել է Հայաստանի Հանրապետության տնտեսահիրավագիտական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

14.10.1986-14.01.1988թթ. աշխատել է Գերագույն դատարանում՝ որպես մեքենագրուհի:

14.01.1988-12.01.1999թթ. աշխատել է Գերագույն դատարանում՝ որպես քրեական գործերով նիստերի քարտուղար:

12.01.1999-01.01.2008թթ. աշխատել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի դատավորի օգնական:

01.01.2008-12.02.2009թթ. աշխատել է Երևանի քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

13.05.2009-07.12.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

13.01.2012-07.04.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

07.04.2018-12.10.2021թթ. աշխատել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

26.12.2006թ. շնորհվել է ՀՀ դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

29.01.2013 թվականին ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր:

Անուշ Ռոբերտի Մխիթարյան

Ծնվել է 1990 թվականի սեպտեմբերի 1-ին, Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր գյուղում:

2005 թվականին ավարտել է Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր գյուղի Լևոն Ադամյանի անվան միջնակարգ դպրոցը:

2007 թվականին ավարտել է Տավուշի մարզի Բերդ քաղաքի վարժարանը:

2011 թվականին ավարտել է Երևանի Մ. Մաշտոցի անվան համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2013 թվականին ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

19.02.2013-09.12.2013թթ. աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

06.02.2014-08.01.2016թթ. աշխատել է ՀՀ վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.01.2016-01.11.2018թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության Դատական վիճակագրության վարման և ամփոփման բաժնում՝ որպես մասնագետ:

01.11.2018-25.09.2020թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Մշտադիտարկման և դատական վիճակագրության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

25.09.2020-03.05.2021թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Մշտադիտարկման և դատական վիճակագրության բաժնում՝ որպես բաժնի պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող:

03.05.2021 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

18.11.2013 թվականին շնորհվել է դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

28.12.2017 թվականին ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից հայտարարվել է Շնորհակալություն:

Ամուսնացած չէ:

Հայկանուշ Արթուրի Սուքիասյան

Ծնվել է 1989 թվականի օգոստոսի 3-ին, Երևան քաղաքում:

2006թ. ավարտել է Երևան քաղաքի Վաղարշ Վաղարշյանի անվան թիվ 80 միջնակարգ դպրոցը:

2010թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը՝ ստացել իրավագիտության բակալավրի աստիճան:

2013թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան՝ ստացել իրավագիտության մագիստրոսի աստիճան:

2015թ.-ից «Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ է:

01.05.2010-29.09.2014թթ. աշխատել է «Արնի Լեգալ Էյդ» փաստաբանական գրասենյակում՝ որպես քաղաքացիական և վարչական գործերով իրավաբան, դատական գործերով ներկայացուցիչ:

20.09.2012-01.12.2012թթ. աշխատել է Փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

27.06.2011-30.11.2013թթ. աշխատել է «Միգուար Փարթներս» ՍՊ ընկերությունում՝ որպես տնօրեն:

01.10.2014-01.06.2015թթ. աշխատել է «Ռիմ ընդ Ար» ՍՊԸ-ում՝ որպես փաստաբան:

02.11.2015թ.-ից աշխատում է «Արագ» արտոնագրային և իրավաբանական գրասենյակում՝ որպես քաղաքացիական և վարչական գործերով փաստաբան, դատական գործերով ներկայացուցիչ:

01.05.2020թ.-ից համատեղությամբ աշխատում է «Առողջապահական իրավունքի կենտրոն» ՍՊԸ-ում՝ որպես փորձագետ-խորհրդատու:

25.06.2012.թ-ից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան:

2015թ. վերապատրաստվել է «Իրավունքի գերակայություն» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Իրավական պաշտպանության արդյունավետ համակարգի ներդրումը ճանապարհատրանսպորտային հարաբերություններում» թեմայով:

2016թ. վերապատրաստվել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան և «Հայհեղինակ» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Հայաստանում հեղինակային և կոլեկտիվ հիմունքներով կառավարման վերաբերյալ իրազեկում» թեմայով:

Գրիգորյան Սիրանուշ Գագիկի

Ծնվել է 1993 թվականի ապրիլի 1-ին, քաղաք Երևանում:

2009 թվականին ավարտել է Խաչիկ Դաշտենցի անվան թիվ 114 միջնակարգ դպրոցը:

2013 թվականին ավարտել է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի և Լիոն 3 համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2016 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2019 թվականին ավարտել է ԱՄՆ Չիկագո քաղաքի Ամերիկյան իրավունքի դպրոցը ստացել իրավունքի մագիստրոսի կոչում:

2020 թվականին ավարտել է ԱՄՆ Չիկագո քաղաքի Չիկագո-Քենթ իրավունքի դպրոցը, ստացել միջազգային, անդրազգային և ԱՄՆ իրավունքի մագիստրոսի կոչում:

08.01.2014-09.09.2014թթ. աշխատել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

01.08.2015-15.03.2021թթ. աշխատել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում՝ որպես իրավաբան:

15.03.2021-01.04.2022թթ. աշխատել է ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ունիվերսալ վարկային կազմակերպությունում՝ որպես իրավաբանական ծառայությունների բաժնի ղեկավար:

2021-2023թթ. իրավաբանական գործառույթներ է իրականացրել Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնում:

29.04.2022-17.07.2022թթ. աշխատել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում՝ որպես գլխավոր մասնագետ:

18.07.2022-06.10.2023թթ. աշխատել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում՝ որպես բաժնի պետ:

01.09.2023 թվականից հանդիսանում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի դասախոս:

09.10.2023 թվականից աշխատում է Նյու Վենչուր Բրոքերիջ ՓԲԸ-ում՝ որպես գլխավոր իրավաբան:

Հասմիկ Ստեփանի Այվազյան

Ծնվել է 1983 թվականի օգոստոսի 2-ին, Վանաձոր քաղաքում:

2000թ. ավարտել է Վանաձորի թիվ 20 միջնակարգ դպրոցը:

2000-2004թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, ստացել իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան:

2004-2006թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան, ստացել իրավագիտության մագիստրոսի որակավորման աստիճան:

01.06.2004-25.12.2005թթ. աշխատել է <Ֆրիգեյթ> ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

31.01.2006-19.07.2006թթ. աշխատել է Վանաձորի քաղաքապետարանի գույքի կառավարման, եկամուտների հավաքագրման, առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ-իրավաբան:

19.07.2006-08.02.2007թթ. աշխատել է Տնտեսական դատարանում:

14.02.2008-01.03.2013թթ. աշխատել է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

23.12.2007թ. նրան շնորհվել է Դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

01.03.2013-01.12.2022թթ.աշխատել է Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում քաղաքացիական կացության ակտերի գրանցման Վանաձորի տարածքային բաժնում՝ որպես բաժնի պետ:

01.12.2022թ.-ից առ այսօր աշխատում է Դատական դեպարտամենտի Դատավորներին և թեկնածուներին առնչվող վարչության Դատավորների և թեկնածուների առաջխաղացմանը վերաբերող հարցերի բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի պաշտոնակատար:

Ամուսնացած է, ունի երեք երեխա: